ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 207 – Ա 21 ապրիլի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թվականի մարտի 24-ի N ԱԺՈ-001-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 2-րդ գլխի և 9-րդ գլխի 80-րդ կետի պահանջներն ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 10-ի N 432-Ա որոշման 1-ին կետը

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Լուսինե Վարդանյանին:

21.04.2021

ԳՆԵԼ ՍԱՆՈՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Digitally signed by SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2021 թ. ապրիլի -ի
N - Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների ժամանակացույց

1. «Վաղաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. հունիսի 29-ին, ժամը՝ 11^{00}-ին
2. «Լճաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. հունիսի 29-ին ժամը՝ 14^{00}-ին
3. «Ծակքարի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 2-ին, ժամը՝ 11^{00}-ին
4. «Մեծ Մասրիկի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 2-ին, ժամը՝ 14^{00}-ին
5. «Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 6-ին, ժամը՝ 11^{00}-ին
6. «Լուսակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 6-ին, ժամը՝ 14^{00}-ին
7. «Դդմաշենի ԲԱ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 9-ին, ժամը՝ 11^{00}-ին
8. «Երանոսի ԲԱ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 9-ին, ժամը՝ 14^{00}-ին
9. «Նորատուսի ԲԱ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 13-ին, ժամը՝ 11^{00}-ին
10. «Ակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 13-ին, ժամը՝ 14^{00}-ին
11. «Վարդենիկի ԱԿ» ՊՈԱԿ	2021թ. հուլիսի 16-ին, ժամը՝ 11^{00}-ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ